

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ս. ԷՉՄԻԱԾՆԻ ՏՕՆԸ.

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաս-
տան աշխարհի»։ Շարական

Իւրաքանչիւր տարի Հայոց եկեղեցին տօնում է ս. Էջմիածնի տօնը։ Իւրաքանչիւր ճշմարիտ և մեր պատմա-
կան անցեալին քաջ ծանօթ հայի սիրտը լցւում է այդ
տօնակատարութեամբ։ Իսկապէս միայն հայի կրօնական
զգացմունքները չէ՛ որ առաջ են բերել ս. Էջմիածինն, այլ
կրօնական և ազգային զգացմունքների սերտ ներգաշնա-
կութիւնն է՝ որով հայի համար առաջ է եկել մի այդպիսի
կայան, մի այդպիսի պատմական կենտրոն, ազգային վեհ
գաղափարներից շարահիւստած մեծ և անխորտակելի մի
օղակ, որով միմեանց հետ մինչև այժմ կարողացել են
կապուած մնալ հեռաւոր կողմերում տարագիր եղած Մայր
Նրկրից հեռացած հայ զաւակները։

Մենք որոշ տեսակէտից բախտակից ենք հրէից ժո-
ղովրդին։ Այս՝ բառիս բուն նշանակութեամբ՝ տարագիր
ժողովուրդը որքան որ դարերի ընթացքում հալածուել է
և իւր բախտը փնտռել աշխարհիս ամենահեռաւոր անկիւննե-
րում՝ այնուամենայնիւ այդ ժողովուրդը միշտ ոգևորուել
և ճշմարիտ ազգասիրութեամբ կապուել է Մայր Սիօնի—
Նրուսաղէմի Տաճարի հետ։ Ուժեղ և խիստ ուժեղ է հրէ-
այի մէջ ազգասիրական գաղափարը, որտեղ էլ լինի, ինչ
հանգամանքների մէջ հրէան գտնուի՝ այնուամենայնիւ
նորա մէջ չէ մարում հրէական ուժեղ ազգային գաղա-
փարը։ Ահա և նոքա կրօնական ու ազգային գաղափար-
ների սերտ կապակցութեան շնորհիւն է՝ որ Մայր Սիօնի—

Երուսաղէմի Տաճարի շուրջը փարուած, հազարաւոր ան-
նպաստ պայմաններում կարողանում են ամեն տեղ պահ-
պանել իրենց ինքնուրոյնութիւնը և իրենց անխորտակելի
գոյութիւնը: Պատմական ազգի յարատեւութեան հիմնաքա-
րի—Մայր Սիօնի—օրինակը պէտք է մեզ ևս միշտ ոգևո-
րի, մենք ևս միշտ պէտք է ամուր կերպով կապուենք այն
բարոյական մեծ օղակով, որ Գրիգոր Լուսաւորիչը և Հայոց
Տրդատ Թագաւորը կառուցանելով, թողել են յաւիտենա-
կան յիշատակ մեզ՝ յետնորդ հայերիս: Այդ բարոյական
մեծ օղակը հայերիս համար ս. Էջմիածինն է՝ Մայր Աթոռն
է: Չափազանց մեծ է ս. Էջմիածնի կառարած պատմական
դերը հայ ժողովրդի համար, ընթերցողը թող համոզուի՝
կարդալով ազգային և եկեղեցական պատմութիւնը:

Ընարական վեհ սկզբունքով ս. Էջմիածնի Լուսաւորչի
Գահի վրայ բաղմած մեր արժանաւոր Հովուապետները
եղել են դեկավար հայ ժողովրդի այն վառ զգացմունքների,
որոնցով դարերի ընթացքում հայր փարուած Մայր Աթոռի
շուրջը ապրել է: Մաքուր ազգային հոգով անուած Հայրա-
պետներն են եղել, որ կարողացել են իրենց հովուական
թղթերով, իրենց արժանաւոր նուիրակներով կապել Մայր
Աթոռի հետ տարագիր հեռաւոր կողմերում ցրուած հայ
հօտը: Պարտաճանաչ և արթուն Հովուապետներն են եղել՝
որ իրենց բողոքի ձայնն են բարձրացրել, գալիք վտանգ-
ներից երկիւղ չկրելով, երբ իրենց հօտին կրօնական թէ-
քաղաքական վտանգ է սպառնացել: Հովուապետների այդ
բողոքի ձայնը երբէք անհետևանք չէ մնացել, երբ օտար-
ները տեսել են՝ որ այդ ուժեղ ձայնն է միաժամանակ
ամբողջ ժողովրդի, ամբողջ ազգի բողոքի ձայնը: Հովուա-
պետն և հօտը միացած են գործել: Ահա այստեղ է եղել
յաջողութեան այն գաղտնիքը, որ վտանգաւոր բոլէնե-
րում արաւայայտուել է Հովուապետի և հօտի համերաշխ
գործունէութեամբ:

Ներկայումս հայութեան մի մասը—մեր տաճկահայ
եղբայրներն իրենց գոյութեան վտանգաւոր ապրումների
մէջ են քարշ տալիս իրենց կեանքը: Հայաստան աշխարհը,

ինչպէս շատ անգամ, այժմ ևս դարձել է պատերազմի թա-
տերաբեմ: Վերստին մեր հազարաւոր մայրերի, քոյրերի
և եղբայրների արիւնն է թափւում արիւնարբու քրդի և
տաճկի ձեռքով, վերստին Հայաստանի քարերն ու գետերն
են ներկւում հայի արիւնով, կրկին հայ անմեղների արդար
բողոքն է բարձրանում մինչև երկինք, իրենց համար խնդ-
րելով Տիրոջից ասպանով կեանք ու խաղաղ աշխատանք:
Միւս կողմից հազարաւոր փախստական հայեր իրենց կեանքն
ազատելու համար թողել ու ասպատան են գտել Մայր
Աթոռում, մինչև որ իրենց Երկիրը խաղաղութի և հնարա-
ւորութիւն ունենան կրկին վերադառնալ:

Ահա այսպիսի չափազանց բարդ և լուրջ պատմական
ժամանակամիջոցումն է՝ որ միճակուած է Հայոց Հովուա-
պետին գործելու իւր տանջուած տաճկահայ զաւակների
համար: Ազգիս արժանւնտիր արթուն Հովուապետ Տ. Տ.
Գէորգ Ե. կաթողիկոսն ամենալայն չափով ներկայումս
կատարում է իւր տանջուած զաւակների համար այն ամե-
նը, ինչ որ կարելի է, ինչ որ հանգամանքները թոյլ են
տալիս: Դեռ ևս Եւրոպական պատերազմը չբռնկուած՝ երբ
Տաճկահայոց տանջանքի բողոքի ձայնը հասաւ Մ. Աթոռ,
Վեհափառ իսկոյն արձագանք տուեց և դիմումներ արաւ
Ռուս կառավարութեան և Եւրոպական պետութեանց: Հայ-
կական հարցի ներկայ շրջանում ամենաազդու դերն է կա-
տարել Վեհափառ Կաթողիկոսն և շարունակում է իւր
պատմական մեծ առաքելութիւնը՝ կարևոր դիմումներ անե-
լով Երրեակ համաձայնութեան պետութեանց անմիջապէս և
կամ իւր արժանաւոր ներկայացուցիչ վսեմափայլ Պօղոս
փաշայ Նուբարի միջոցով: Երբ զաղթականական հոսանքը
սկսուեց դէպի Մայր Աթոռ՝ Վեհափառ Կաթողիկոսի
հայրական դիմումներին արձագանք տուին մեծ չափով
աշխարհիս ամենահեռաւոր անկիւններից Մ. Աթոռի հա-
րազատ զաւակները, ուղարկելով դրամական օգնութիւն:

Այս տարի, մայիսի 24-ին, աւելի քան խորհրդաւոր
կերպով տօնուեց ս. Էջմիածնի տօնը: Վեհափառ Կաթո-
ղիկոսն լուռ կերպով աղօթում էր իւր զաւակների համար:

Աղօթում էր՝ որ տաճկահայ ժողովրդից ընդմիշտ վերանայ Տաճիկ կառավարութեան բռնակալ լուծը: Ամեն անգամ Վեհափառն ուրախութեան արցունքներ է թափում, երբ Հայաստանի այս կամ այն քաղաքի գրաւման լուրն է ստանում: Այժմ աւելի քան լսելի պէտք է լինի հայ ժողովրդի համար Մայր Աթոռի ձայնը, որ կանչում է իւր զաւակներին միահամուռ գործունէութիւն ցոյց տալ և օգնել տառապող Տաճկահայ ժողովրդին՝ ընդմիշտ ազատագրուելու:

Ով ինչով կարող է՝ պէտք է օգնի: Մեր երիտասարդներն պէտք է գնան և Ռուս քաջարի զօրքերի շարքում կռուեն՝ ազատագրելու հայ ժողովուրդը: Թող ուրեմն չկորցնենք կարևոր բոլէն՝ Մ. Աթոռի հարազատ զաւակներն արձագանք տան Վեհափառ Հայրապետի կոչին և առաջ բերեն համերաշխ գործունէութիւն յանուն Տաճկահայ ժողովրդի ազատագրման մեծ գործի: Լուսոյ խորանը Մայր Աթոռում ներկայումս պէտք է լինի ամբողջ հայութեան համերաշխ գործունէութիւնը, որի շնորհիւ հնարաւոր կը լինի տարածել ազատութեան լոյսը Հայաստան աշխարհում: Ուրեմն եկէք միասին տարածենք Տաճկա-Հայաստանում այդ ցանկալի ազատութեան լոյսը:

Բարգէն վարդապետ:

